

ԲԵՐԴԻ ՄԵԺ ԵԿԵՂԵՑԻ

Քարձր սրբազն աւր Յովսէփի Արքեպիսկոպոս Երկայ-
նաբազուկ արդութեան, Ապա մեր լաւատորքն, քաղաքի մ-
լիք դարչին և չորս հաղբատայ ժողովուրդք բէթխուդայք,
ընդ ձեզ վերահասու արաւջիք լաւապէս բննելով ճշմարիտ
իրաւունք տաջիք, յունիսի 17, յամին 1797. հաղբատայ
Առաջնորդն ևս թէպէտ և իցէր, որովհետև ձեր բարձր
սրբազնութիւնն աստ հրամայիւր, յայնժամ ևս հարկ էր
որ վերահասու լինէիք

կնիք Հերակլ ար-
բային.

Աստուած բախտաւոր Թագաւորի ախտն տացէ բերթի
մեծ եկեղեցւոյ աւագ բահանայ տէր առաքելին։ Ողորմած
թագաւոր ունելոց էր 'ի մաի զի սոյն եկեղեցիս յոլով ժա-
մանակս, հեթանոսըն ունէին բոնադատեալ և գերի էր 'ի
ձեռն նոցին, Աստուած զօրացուցանէ զթագաւորութիւն ձեր,
դուք զերծուցիք 'ի գերութենէ։ Ըստ որում սոյն եկեղեցիս
ոչ ժողովուրդ ունէր և ոչ թէ յուստեք եկամուտ ունէր,
զաքարիայ վարդապետն, բարձրագոյն հրամանաւ, սոյն եկե-
ղեցւոյ պարսպի վերայ, երեսն դէպ 'ի մէյդանն շինեաց
զդուքանս որ նոցին զքիրայսն, սոյն գերի անկեալ եկե-
ղեցւոյն պիտոյացի 'ի յիշատակ հոգւյն իւրոյ։ Տէր տացէ
ձեզ երկար կեանս, և զնա յարբայութեան ժառանգեցուս-
ցէ, սոյն եկեղեցւոյ շինութեանն ձեռն էարկ, դուքանաց
զքիրայս, և յինքենէ ևս ծախս առնէր եկեղեցւոյ վերայ,
ժամանակն ոչ էանց, ձեր ախտին փոխանակեցաւ։ Յետ նո-
րին՝ Թաղոյի որդի մլրատում 'ի վէքիլութեան իւրոյ, 'ի պա-
րըսպին սոյն եկեղեցւոյ և 'ի կարգին սոյն դուքանաց՝ զայլ
զդուքանս շինեաց հաղբատայ եկամաիցն, և նո ևս ձեր
ախտին փոխանակեցաւ։ Յետ պյնորիկ ովք որք Առաջնորդք
կարգեցան, պատճառ զայս արարին թէ հաղբատայ դրամիւ
է շինեալ ասէ, Թաղոյի որդւոյ շինեալ դուքաններու քի-
րայն, և զաքարիայ վարդապետի շինեալ դուքաններու քի-

րան ևս նոքա ստացան, որ մի շահի ողյն գերի անկեալ և քպյթայեալ եկեղեցւոյ վերայ չեն գործ ածեալ, յայնմ հետէ սոյն եկեղեցւոյն իւր մլբի ըթրայն չէ հասեալ: Ողորմած թագաւոր, ձեր բարեբախտ աչքն տեսեալ է զի սոյն եկեղեցւոյն ինչպէս էին վշտացուցեալ հեթանոսըն, զպարիսպն քակեալ էին մինչև զպատուհանսն 'ի խոպանս և 'ի յաղբս էր. և 'ի յերդս եկեղեցւոյն կանայքն ջահրայ կը մանէին, և 'ի կողմն եկեղեցւոյն մեծ և բարձր գոյր աշբանոց դիղացեալ, և եկեղեցւոյ գլուխն ևս այնպէս հնացեալ էր որ բազում անգամ անձրւն 'ի ժամասացութենէ և 'ի պատարագէ խափանէր մեզ: Ես անարժան քահանայս, բարձրագոյն հրամանաւ և ողորմութեամբ, և թումանի որդւոց, յարգելի դատաւորաց կամօք և յօժանդակութեամբ ձեռնարկի, մեծ աղբանոցն բարձի և 'ի գետն արկեցուցի, և եկեղեցւոյ վերայ կողմնեալ խոպանն ևս բարձրցուցի և պարսպապատեցի բռամբ և քարիւ, շրջապատեցուցի զպարիսպ, եկեղեցւոյ գմբէմն ևս ետու շինել որ ամենեցուն է գիտելի, հնոց ժամանակաց համբաւ ոչ գոյրայքան պատճառանօր 'ի վերայ եկեղեցւոյ պարա եղաւ և 'ի մեծ վշտակութիւնս եմ:

Ողորմած թագաւոր, այսքան շինութեանց և ծախուց վերայ, Հաղբատայ առաջնորդքն մի շահւոյ ոչինչ են օդնեալ, այլ փոխանակ օգնութեան, սոյն գերի անկեալ եկեղեցւոյ մլբէրու զեկամուտան ևս ոչ տան թոյլ: Աստուած ոչ խափանեսցէ 'ի Հաղբատայն քաղաքն, քարթն, կախէմն և զղաղախն, որոց եկամուտքն նորա է', սոյն խղճալի եկեղեցւոյն ընդէ՞ր ոչ խղճան, խնդրեմք 'ի ձենջ զի մէլիքն հրովարտակաւ հրամայէք որ, դատաւորաց, քաղաքացւոց վերահասութեամբ հարցանիցեն և իրաւամբ, սոյն ձեր գերծուցեալ եկեղեցւոյ, ձեր ողորմութեանն, իւր զմուլքն թոյլ տան ինքեան, որ սոյն եկեղեցին, պարտուց վճարեյ և իւր պակասութեանն լցուցանել կարողացի 'ի փառս Աստուծոյ և 'ի ձեր յօրհնութիւնս հաստատեսցի. և ով ոք որ լինիմք 'ի սոյն յեկեղեցւողն, միշտ և հանապազ ձեր բարեբախտ անուան օրհնողք և յիշատակողք լիցուք: Յունիսի 1. յամին 1797: Սոյն հրովարտակս, մեր հանգստարան մեծ եկեղեցւոյ հրովարտակն է, կնիազ մանուչար թումանեան: